

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա առթիվ

10.11.2018



Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի գործընկերներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա
առթիվ:

22 տարի առաջ այս օրը Հայաստանի Հանրապետությունում անցկացվեցին տեղական
ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները, որով դրվեցին տեղական
ժողովրդավարության հիմքերը:

Տեղական ինքնակառավարման մարմինները բարդ ու պատվաբեր առաքելություն են
իրականացնում՝ հանդիսանալով քաղաքացու և պետության անմիջական կապող օղակը:
Պետությունն ուժեղ է իր ուժեղ համայնքներով, և երկրի կայունության հիմքը զարգացած
ու կազմակերպված համայնքներ ունենալն է:

Հեղափոխությունից հետո մեր ժողովրդի սպասումներն ու ակնկալիքներն էլ ավելի են
մեծացել այս ինստիտուտի հանդեպ: Ուստի, հարգելի ՏԻՄ ներկայացուցիչներ,
համոզված եմ, որ որդեգրելու եք Ձեր առաքելությունն արդար և վստահորեն կատարելու
գաղափարը՝ հանուն ավելի կայուն և բարեկեցիկ հասարակության, ավելի ուժեղ
համայնքի ու պետության:

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ այս տոնական օրվա առթիվ՝ մաղթելով
հաջողություններ, ամուր կամք և հաստատակամություն՝ Ձեր պատվաբեր և
պատասխանատու գործում: